փոխկու» իսկական նշանակութիւնը հասկանում էին և քրքջում էին... երբ մի չրեր կին 8-10 տարի զաւակ չէր ունենում և յանկարծ լսում էր, որ նա զաւակ է ունեցել՝ հարեւանները, կամ ազգականները լսելիս՝ հռհռալով և քրքջալով միմեանց յայտնում էին, – «աղջի, նա բարձր փոխկ է»: Եւ եթէ պատահէր մի օր նա այցի գար նրանց տունը՝ կանայք նրա շուրջն էին հաւաքւում, շնորհաւորում էին նրան և քրքջալով հարց էին տալիս, – «աղջի, չէնի՞ բարձդ փոխեցիր...» և նորից քրքջում էին: Եւ ահա այս միտքն է արտայայտած Սաթենիկի վիպասանական կտորի մէջ՝ սրանից մօտ 2100 տարի առաջ...

Եզրակացութիւն. – Իմ ասածներից և բացատրութիւններից պարզ երեւում է որ «Վիպասանական երգերի» Սաթենիկին վերաբերող կտորի մէջ՝ բուսական ոչ մի բառ գոյութիւն չունի, բժժանքի գաղափարը բացակայում է, այլ կայ դաւաճանական, անհաւատարիմ և գաղտնի սէր փնտռելու գաղափարը:

Որ այդ հատուածը - քերականօրէն պարզ է և ուղիղ, բառամթերքով հասկանալի է, թէեւ ոչ ոսկեդարեան (և չէր էլ կարող լինել), իսկ մտքով յար և նման է մեր այսօրւայ ժողովրդական հաւատալիքներին՝ երեւան է գալիս իմ բացատրութիւններից:

Այդ հատուածը բառացիօրէն և առանց շարադասութիւնը փոխելու՝ պիտի թարգմանել.

Տեսնում է Սարեսիկ տիկին տեսչանքներ, –
Արտահոշ (հրայիսի) խաւար նաւ խաւարչի
աստուածներից, –
Բաներից Արգաւանի:

Ես սպասում եմ լսելու մեր բանասէրների կարծիքները իմ տուած բացատրութիւնների մասին:

Ես հաւատում եմ, որ իմ տուած բացատրութեամբ խորենացու այս մութ առեղծուածը իսպառ լուծուած պէտք է համարել:

ՍԱՀԱԿ ՁԹՉԵԱՆ

Ֆրէզնօ, Կալիֆօրնիա.

ԱՌ ՄԽԻԹԱՐ ԱԲԲԱՀԱՅՐ

Յաղթապանծ ծովը դարձեալ իր փանդիռներն է յոչգեր.
Կ'երգեն չուրերը ամէն ընդմէջ երկնի և երկրի.
Դուն կ'երեւիս իմ հոգւոյս վերացման դէմ բերկրալի՝
Ինչպէս շառաչն արեգին ծոցն անդուռնդին տրտմաւեր:

Զրկայ վայրկեան մ'որ ըլլայ այնքան թովիչ և անանց,
Որքան քու այցն իմ կեանքին մեռնորեան մէջ մրտերիմ,
Որքան քու սէրն որով ես տարի խոնարհս ու սիրտ իմ
Դէպի բարձրերն, ուր կ'ապրին գերիրականն ու Աստուած:

Տեսիլներն իմ միշտ քեզմով առին հրայրք, թափ և ոյժ,
Քու մրտածման և սիրոյն կատարներուն շողակար՝
Ես քաղեցի ներշնչման հարրուհայսները քնքուշ:

Հիմա, խուցին, ուրկէ Դուն աւանդեցիր բանն անգին,
Ես կը դիտեմ Ս. Ղազարն, որուն քարերը հաստատ՝
Լոյսի ներման կը վառին այլափոխման մէջ խորին:

Ս. Ղազար, 19 Յունիս 1949 ԱՐԱՄԱՅԻՍ ՍՐԱՊԵԱՆ

ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԸ

(Aracoeli = Առաքեալ)

Տօքթ. Ատուր Յ. Եաղուպեան «Անահիտ»ի 1947–8 թիւերուն մէջ քանի մը յօդուածներով կը յայտարարէ թէ Հայուն և հայերէնին հետքերը մեծ եղած են մերձաւոր Արեւելքէն մինչեւ Արեւմուտք, թէ եւրոպական և այլ օտար լեզուներու շատ մը բառեր, յատուկ անուններ և տեղանուններ հայկական ծագում ունին:

Բազմաթիւ բառեր յիշելէ յետոյ կ'աւելցնէ. – «քանի մը տարի առաջ ամերիկեան զրութեան մը մէջ կարդացի որ Հռոմ Aracœli (Առաքեալ) անուն տեղ մը կայ: Վերջերս աչքէ անցուցի Հռոմի քարտէսը և գտայ այդ վայրը հին Կապիտոլիումի շրջանակին մէջ, «Առաքեալի դրուր և փողոց» անունով: Ս. Պապին և Մխիթարեան հայրերուն տեղեկագրեցի այդ մասին... Առաքեալի հայանուն հնութիւնը մեզ տան և ութ դարեր ետ կը տանի... հետաքննենք և երեւան հանենք մեր մեծութեան այդ փաստերը...» եւայլն:

Եւ խմբագրապետը արդարանալի տարակուսանքով. «Արդեօք գիտական լուրջ հիմք ունի՞, թէ՝ հեղինակին ազգասիրական խանդավառ երեւակայութիւնն է», ըսելով կը թողու բանասէրներու քննադատութեան:

Տիտղոսաւոր բանասէր ու լեզուագէտ չըլլալուս ինձի պիտի չթոյլատրեմ բացատակ վճիռ մը արձակել: Զափազանց գնահատելով հանդերձ Տօքթ.ին երկարամեայ աշխատութիւնները, կը ցաւիմ ըսելու որ համաձայն չեմ յարգելի յօդուածագրին ընդգրկած ուղղութեան հետ, բառերու ստուգաբանական հարցին մէջ:

Առնենք զոր օր. *Béarn*: Ֆրանսայի Պէառն գաւառին Beneharnum հին քաղաքին անունն է, որուն բնակիչներն էին Beneharnensis, Huronensis, Venarni. Հայերէն «բերան» բառին հետ ոեւէ ազգակցութիւն չունի: *Tours* քաղաքը. կոլուաները կը կոչէին զայն Altionos. Հռոմայեցիք փոխեցին Cæsarodunum Turonum-ի, տեղւոյն բնակիչներուն անուամբ, Les Turones. Ո՛եւ է առընչութիւն չկայ հայերէն «Տուրու»ի հետ, «Տուրուբերան»: Տարիներ առաջ Փարիզ՝ խանութի մը ճակատին վրայ կարդացի «*Désarméniens*» անունը: Հետաքրքրութեամբ ներս մտայ և որպէսզի տէրը զիս ոստիկանական քննիչի մը տեղ առնելով կասկածամտութեամբ չմոռենայ ինծի, պարզեցի թէ յատուկ անուններու ուսումնասիրութեամբ կը պարապիմ: Ժպտելով պատասխանեց թէ շատ աղօտ գաղափար մը ունէր, միայն լսած էր թէ իր նախնիքները հայեր են եղած և այդ անունով կոչուած: Բայց թէ այս հայերէն անուն չէ, ֆրանսերէն է որ հայեր կը նշանակէ:

Ցանկը երկար է. բայց ամէնէն շատ ուշադրութիւնս գրաւողը եղաւ վերոյիշեալ *Aracœli* (Առաքեալ) բառը: Իւրաքանչիւր բառ և անուն առանձնաբար մանրամասն վերլուծման, քննական խոր ուսումնասիրութեան ու բացատրութեան կը կարօտի: Ուրեմն նախ քան այդ, ակնարկ մը նետել անհրաժեշտ է պատմութեան ընթացքին ստուգաբանական գիտութեան բռնած մեթոտներուն վրայ, հասկնալու համար թէ ինչո՞ւ և ի՞նչպէս յարգելի յօդուածագիրը աչքառու շփոթութեան զոհ գացած է:

Ինչպէս բնութեան բոլոր արտադրութիւններու զարգացման, այնպէս ալ լեզուի զարգացման կը նախագահեն օրէնքը և կարգ ու կանոնը: Այն բոլոր փոփոխութիւնները զոր կը նշմարենք մարդկային լեզուի պատմութեան մէջ, դիպուածի արդիւնք չեն, այլ՝ ճակատագրօրէն կը հնազանդին սահմանաւորեալ ընդհանուր օրէնքներու:

© National Library of Armenia